ԶԵԿՈՒՅՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ CalWORKs ԵՎ CALFRESH ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳՈՐԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝	
ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐԸ՝	
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐԸ՝	

Քանի որ դուք ստանում եք ☐ CalWORKs ☐ CalFresh նպաստ, դուք պետք է 10 օրվա ընթացքում մեզ զեկուցեք այն դեպքում, երբ ձեր եկամուտների ԸՆԴՀԱՆՈՒՐ գումարը հասնում է որոշակի մակարդակի: Դուք պետք է զեկուցեք ամեն անգամ, երբ ձեր կենցաղի ընդհանուր ամսական եկամուտը գերազանցում է ձեր ընթացիկ Եկամուտների զեկուցման շեմը (Income Reporting Threshold, IRT):

Նպաստի տեսակը	CalWORKs	CalFresh
Ընտանիքի չափը		
Ձեր ընթացիկ եկամուտը		
Ձեր IRT-ն կազմում է		

Նշում. եթե ձեր IRT-ն CalFresh-ի համար նշված է որպես «N/A», ապա ձեզանից չի պահանջվում զեկուցել եկամտի փոփոխությունները CalFresh-ի համար մինչև ձեր հաջորդ SAR 7 կամ վերավկայագրումը, որը որ ավելի շուտ տեղի կունենա: Սակայն, եթե CalWORKs-ի համար IRT գումար է նշված, դուք պետք է զեկուցեք, երբ ձեր համախառն եկամուտը գերազանցի այդ գումարը:

Ինչպե՞ս զեկուցել:

Եթե Ձեր ընդհանուր եկամուտը գերազանցում է վերը նշված IRT գումարը, ապա պարտավոր եք այդ մասին հայտնել Վարչական շրջանին **10 օրվա ընթացքում:** Դուք կարող եք այդ տեղեկությունները Վարչական շրջանին հաղորդել՝ զանգելով Վարչական շրջանի գրասենյակ, կամ դա անել գրավոր:

«Ընդհանուր ամսական եկամուտը» նշանակում է՝

- ⇨ ցանկացած փող, որը ստանում եք (և՛ վաստակած, **և՛ չվաստակած**).
- ⇨ գումարը *նախքան* որևէ հանում կատարելը: (հանումների օրինակներ են՝ հարկեր, սոցիալական ապահովության կամ կենսաթոշակային մուծումներ, պարտապանի գույքի կամ աշխատավարձի վրա դրված կալանքներ և այլն)

Ի՞նչ է տեղի ունենալու:

- ⇨ Ձեզ հատկացվող նպաստները կարող են նվազեցվել կամ դադարեցվել Ձեր IRT-ն գերազանցող եկամտի հիման վրա:
- ⇨ Ձեր IRT-ն կարող է փոխվել, երբ եկամուտն է փոխվում, կամ երբ ինչ-որ մեկը տեղափոխվում է Ձեր տուն կամ դուրս է գալիս տնից:
- ⇨ Ամեն անգամ, երբ Ձեր IRT-ն փոխվի, Վարչական շրջանը Ձեզ գրավոր կտեղեկացնի այդ մասին:
- ⇨ Նաև անհրաժեշտ է Ձեր իրավունակության տարեկան վերանայման կամ վերավկայագրման (redetermination/recertification, RD/RC) ընթացքում զեկուցել բոլոր եկամուտների մասին, որոնք պահանջում է RD/RC ձևը, նույնիսկ եթե արդեն զեկուցել եք գումարի չափը:

Տուգանքներ՝ չզեկուցելու դեպքում

Եթե Ձեր եկամուտը գերազանցում է Ձեր ընտանիքի IRT սահմանաչափը, բայց այդ մասին չեք հայտնում, ապա հնարավոր է, որ հարկ եղածից ավելի շատ նպաստներ ստանաք: Դուք **պարտավոր եք** փոխհատուցել բոլոր հավելյալ նպաստները՝ ըստ այն եկամտի, որը չեք զեկուցել: Եթե չզեկուցեք միտումնավոր՝ փորձելով ավելի շատ նպաստներ ստանալ, ապա դա խարդախություն է, և Դուք կարող եք մեղադրվել քրեական հանցագործության մեջ:

Քանի որ դուք CalWORKs եք ստանում, դուք ՊԱՐՏԱՎՈՐ ԵՔ ՆԱԵՎ զեկուցել հետևյալի մասին 10 օրվա ընթացքում դա տեղի ունենալուց հետո.

1. ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը տեղափոխվում է Ձեր տնային տնտեսություն կամ դուրս է գալիս այնտեղից.
2. ամեն անգամ, երբ ձեր կենցաղին միացող նոր անդամը կամ արդեն ներկա անդամը խախտում է փորձաշրջանի կամ վաղաժամկետ ազատման պայմանները:
3. ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը միանում է Ձեզ կամ գտնվում է Ձեր տնային տնտեսությունում, ով փախչում է օրենքից.
4. ամեն անգամ, երբ Ձեր հասցեն փոխվում է:

Եթե դուք CalFresh եք ստանում, դուք ՊԱՐՏԱՎՈՐ ԵՔ ՆԱԵՎ զեկուցել հետևյալի մասին՝

- եթե Դուք աշխատունակ չափահաս անձ եք առանց խնամարկյալների (Able-Bodied Adult Without Dependents, ABAWD), ապա պարտավոր եք զեկուցել ամեն անգամ, երբ Ձեր աշխատանքի կամ վերապատրաստման դասընթացի ժամաքանակը շաբաթական 20 կամ ամսական 80 ժամից ավելի *պակաս* է դառնում:

Կամավոր հաղորդվող տեղեկություններ

Դուք նաև կարող եք ցանկացած ժամանակ Վարչական շրջանին կամավոր զեկուցել փոփոխությունների մասին: *Հնարավոր է՝ որոշ փոփոխությունների մասին զեկուցելու դեպքում ավելի շատ նպաստներ ստանաք:* Օրինակ՝

- տանը ինչ-որ մեկը հղիանում է.
- կանխիկ դրամական օգնություն ստացող որևէ անձ հատուկ կարիքներ ունի, օրինակ՝ հղիություն, բժշկի նշանակած հատուկ սննդակարգ, արտակարգ իրավիճակ տնային տնտեսությունում և այլն.
- CalFresh-ի դեպքում՝ եթե որևէ մեկը, ով հաշմանդամ է կամ 60 տարեկան կամ ավելի բարձր տարիքի, ունի նոր կամ նախկինից ավելի բարձր կանխիկ բժշկական ծախսեր: